Գործընկերություն հանուն Սյունիքի

Funded by the European Union

People in Need

WINNET GORIS

Հայկական Կարիտաս Armenian Caritas

Փորձագիտական աջակցություն

Տեղեկատվություն աշխատանքի մասին	
Անվանում	Սոցիալական վճարովի ծառայությունների ներդրման մեխանիզմների մշակում /այսուհետ՝ ծառայություն/
Ծրագրի անվանում	«Գործընկերություն հանուն Սյունիքի. բարելավված համայնքային սոցիալական ծառայություններ»
Կազմակերպություն	«Մարդը կարիքի մեջ» ՀԿ
Պայմանագրի տեսակ	Ծառայությունների մատուցման պայմանագիր
Տևողություն	Առավելագույնը երեք ամիս (նոյեմբեր-2025 – հունվար 2026)
Վայր	Հեռակա/Առնվազն մեկ առկա հանդիպում Սյունիքի մարզի 3 համայնքներում՝ Գորիս, Կապան, Մեղրի/ ՔՀԿ-ների հետ, որոնց համար մատուցվելու է Ծառայությունը

Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող *«Գործընկերություն հանուն Սյունիքի. բարելավված համայնքային սոցիալական ծառայություններ»* ծրագիրն իրականացվում է «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի կողմից՝ «ՎԻՆՆԵԹ Գորիս» զարգացման հիմնադրամի և «Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ-ի հետ համագործակցությամբ:

Հասարակական կազմակերպություններին տրամադրված դրամաշնորհների շրջանակներում մարզի տարբեր համայնքներում մատուցվել են անվճար սոցիալական ծառայություններ, որոնց մի մասը հնարավոր է մատուցել նաև որպես վճարովի ծառայություններ: Ստորև այն ՀԿ-ների ցանկն է, որոնք ծրագրի շրջանակում մատուցում են անվճար սոցիալական ծառայություններ և հետաքրքրված են վճարովի ծառայությունների մատուցման մեխանիզմների ներդրմամբ.

- «Հանուն ազատության» ՀԿ-ն տրամադրում է տպագրական ծառայություններ՝ Կապան համայնքում՝ ապահովելով զբաղվածության հնարավորություններ պրոբացիայում գրանցված անձանց համար:

- «Զարկերակ հարթակ» ՀԿ-ն տրամադրում է սոցիալական տաքսի ծառայություն՝ Գորիսի և հարակից գյուղերի խոցելի ընտանիքների և տեղաշարժման խնդիր ունեցող բնակիչների համար:
- «Համագործակցության կամար» ՀԿ-ն տրամադրում է տարեցների ցերեկային և տնային խնամք, տաք ճաշ:
- «Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ն Տեղ համայնքում մատուցում է սոցիալական ծառայություններ՝ ուղղված երեխաներին, տարեցներին ու հաշմանդամություն ունեցող անձանց:
- **«Ներառում Հայաստան» ՀԿ-ի** կողմից **Քաջարան համայնքում** գործում է երեխաների սոցիալ-հոգեբանական և ներառական «Ապահով երեխաների զարգացման համալիր» կենտրոնը:
- **«Գորիսի նոր սերունդ» ԲՀԿ-ի** կողմից **Գորիս համայնքում** տրամադրվում է ընտանիքի և երեխաների աջակցման ու զարգացման ծառայություններ:
- **«Հանրային խորհրդատվության և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի** կողմից **Սիսիան համայնքում** հարմարեցվել են հաշմանդամություն ունեցող երեխաների ընտանիքների բնակարանների՝բնակության պայմանների բարելավման ծրագիր:
-

Աշխատանքի շրջանակ

- Ուսումնասիրել ՀՀ-ում գործող հասարակական կառույցների կողմից մատուցվող վճարովի սոցիալական ծառայությունների մոդելները և դրանք ներկայացնել ծրագրի շահառու կազմակերպություններին:
- Կազմակերպել աշխատանքային հանդիպումներ ՔՀԿ-ների թիմերի համար՝ վճարովի ծառայության փաթեթների մշակման և թիրախ խմբերի հստակեցման նպատակով:
- ՔՀԿ-ների կողմից վճարովի ծառայությունների մատուցման մեխանիզմների, ինչպես նաև ֆինանսական մոդելների/ ներառյալ հաշվարկի մեխանիզմը/, հարկման դաշտի և հաշվետվողականության վերաբերյալ համապարփակ գիտելիքների տրամադրում:
- Առաջադրանքի իրականացման ողջ ընթացքում համագործակցել ՄԿՄ և Վիններթ Գորիս կազմակերպությունների թիմի հետ՝ ներկայացնելով ընթացիկ և ավարտական հաշվետվություններ:

«Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ն կապահովի վերոնշյալ ՔՀԿ—ների հետ համագործակցությունը, կկազմակերպի հանդիպումները, ինչպես նաև կապահովի փորձագետի լոգիստիկ և կացության համար անհրաժեշտ ծախսերը՝ Սյունիքի համայնքներ այցելությունների ընթացքում:

Գործընկերություն հանուն Սյունիքի

Funded by the European Union

People in Need

WINNET GORIS

Հայկական Կարիտաս Armenian Caritas

Արդյունք

- ՀՀ-ում առկա վճարովի նմանատիպ սոցիալական ծառայությունների մոդելների ներկայացում ծրագրի թիրախ ՔՀԿ-ներին
- ՀԿ-ների թիմերի անմիջական մասնակցությամբ առնվազն յոթ կազմակերպությունների համար մշակված վճարովի սոցիալական ծառայությունների մատուցման մրցունակ փաթեթներ:
- ՔՀԿ-ների ֆինանսական գրագիտության բարձրացում՝ վճարովի ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տեղեկատվությամբ՝ ներառյալ հաշվարկի մեխանիզմի և հարկային պարտավորությունների մասին գիտելիքներ:

1. Դիմելու կարգ

Դիմումները պետք է ներկայացվեն ներքոնշյալ էլեկտրոնային հասցեին մինչև նոյեմբերի 3, ներառելով հետևյալ փաստաթղթերը.

- Կենսագրություն (CV)՝ համապատասխան փորձառության և որակավորումների նկարագրությամբ,
- Տեխնիկական առաջարկ՝ մեթոդաբանությամբ և ժամանակացույցով,
- Ֆինանսական առաջարկ՝ աշխատանքի ընդհանուր արժեքով,

ՄԿՄ կողմից տվյալ ծառայության համար սահմանված օրավարձը կազմում է 30,000-ից 40,000 դրամ՝ ներառյալ հարկերը:

Նախապատվությունը կտրվի այն դիմորդին, որը կներկայացնի արդյունավետ և հիմնավորված մեթոդաբանություն՝ նախատեսելով նվազագույն աշխատանքային օրերի քանակ և առաջարկելով մրցունակ օրական վարձավճար:

Դիմումների ներկայացման վերջնաժամկետը **2025 թվականի նոյեմբերի 9-ն է**:

Հարցերի դեպքում կարող եք դիմել հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ procurement.armenia@peopleinneed.net.